ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 126 - Ա
26 հուլիսի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ սեպտեմբերի 19-ին <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում <<Գեղարքունիք 1>> ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>> թեմայով իմ ղեկավարությամբ ուսումնավարժություն նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

փ/ծ գնդապետ Բարսեղյան Մ. – Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

փ/ծ փոխգնդապետ Աբրահամյան Հ. – Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ պետի տեղակալ, շտաբի անդամ խաղարկման գծով

փ/ծ ավագ լեյտենանտ Գորոյան Վ. – Գեղարքունիքի ՄՓՎ ՃԿԿ հրահանգիչ, շտաբի անդամ վերլուծման գծով

2. Ուսումնավարժությանը ներգրավել ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին, տարհանման հանձնաժողովին, մարզային փրկարարական վարչությանը, Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքների ղեկավարներին ու <<Գավառ>> ՋՕԸ-ին:
3. Մարզային փրկարարական վարչության անձնակազմից ստեղծել ուսումնավարժության միջնորդների խումբ հետևյալ կազմով՝

փ/ծ կապիտան Գ. Հակոբյան – հասարակական կարգի պահպանության և էներգետիկայի, լուսաքողարկման ծառայությունների գծով

փ/ծ մայոր Դ. Մանուկյան - բույսերի և կենդանիների պաշտպանության և ինժեներական ծառայությունների գծով

փ/ծ կապիտան Ա. Խաչատրյան - նյութատեխնիկական մատակարարման և տրանսպորտային ծառայությունների գծով

փ/ծ կապիտան Ա. Առաքելյան - Լանջաղբյուր, Գեղարքունիք համայնքների գյուղապետարանների գծով

փ/ծ լեյտենանտ Ա. Պետրոսյան - բժշկական ծառայության, կապի և ազդարարման ծառայության գծով

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Մ. Բարսեղյանին՝

1) մշակել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլան և եռօրյա ժամկետում ներկայացնել իմ հաստատմանը.

2) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ օգոստոսի 28-ը ներկայացնել իմ հաստատմանը.

3) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ս/թ սեպտեմբերի 12-ին:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, ուսումնասիրել ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտերը.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ